ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« » _____ 2022թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 5-33-66

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԻԿԻՆ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
/Հասցե՝ ք.Երևան, Կենտրոն,
Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ/

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված Ձեր՝ 2022 թվականի հոկտեմբերի 7-ի N 350-66 տեղեկություն ստանալու հարցմանը, հայտնում ենք, որ Ձեր կողմից փնտրվող տեղեկատվությանը ՀՀ Շիրակի մարզպետարանը չի տնօրինում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների և հետևյալ սկզբունքի համաձայն՝ գաղտնիություն:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն օրենքում օգտագործվում հիմնական հասկացություններից է՝ գաղտնիություն՝ ներքին աուդիտորների՝ աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների հուսալի պահպանումը: Ներքին աուդիտորները պարտավոր են առանց համապատասխան լիազորության չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝

1. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար պատրաստված

հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք, որին կարելի է ծանոթանալ օրենքով կամ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով, ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությանը ծանոթացած անձը և կազմակերպությունը պարտավոր են պահպանել դրա գաղտնիությունը: Առևտրային գաղտնիքն ապօրինի հրապարակելու դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Восстановимая подпись

X

ԱՐՍԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Подписано: ABRAHAMYAN ARSEN 2805670108

Հարգանքով՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատարող՝ իրավաբանական բաժին
Հեռ. 0312 4-90-00 154